ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4948-Ա « 08 » դեկտեմբերի 2025թ.

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 59-րդ հոդվածով և 84-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով.

1. «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) հաշվեկշռում հաշվառված, 2010 թվականի արտադրության «Նիսսան Ալտիմա» մակնիշի տրանսպորտային միջոցի (պետ.համարանիշը՝ 087LU01, նույնականացման համարը՝ 1N4AL2A90AC192658) օտարման մեկնարկային գին սահմանել անկախ գնահատողի կողմից գնահատված արժեքը՝ 2600,0 հազ.դրամ, իսկ 2025 թվականին ձեռքբերված թվով 1 հատ Leica GS05/CS20Disto արբանյակային տեղորոշման կայանի օտարման մեկնարկային գինը սահմանել վերջինիս ձեռքբերման արժեքը՝ 6375,0 հազ.դրամ (ներառյալ ԱԱՀ):

2. Հանձնարարել Ընկերության տնօրենին՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունում կատարել օտարված տրանսպորտային միջոցին վերաբերող համապատասխան փաստաթղթերի ձևակերպումները:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Ընկերության տնօրենի վրա:

4. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ